

**ՀՀ տնտեսական իրավիճակի համառոտ վերլուծություն
(2006թ. արդյունքներով)***

Ըստ Հայաստանի Հանրապետության տնտեսության գործունեության 2006 թվականի արդյունքների կայուն տնտեսական աճի միտումները հիմնականում պահպանվել են:

Համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) արտադրությունը կազմել է ավելի քան 2665 մլրդ. դրամ՝ 2005թ. համեմատ ապահովելով 13.4% աճ: ՀՆԱ-ի ինդեքս դեֆլյատորը նշված ժամանակաշրջանում կազմել է 104.8%: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2006 թվականին կազմել է 1989 ԱՄՆ դոլար:

2006թ. ՀՆԱ-ի կառուցվածքում նյութական արտադրության հիմնական ճյուղերի՝ արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության տեսակարար կշիռը ավելացել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 59.5%: Ընդ որում դրանց մասնաբաժինը ՀՆԱ-ի հավելաճում նվազել է մինչև 8%՝ 2005թ. 9.4%-ի դիմաց:

Աղյուսակ 1. ՀՆԱ-ի արտադրությունը 2006թ., ըստ հիմնական ճյուղերի

| | Ցուցանիշի անվանումը | Կառուցվածքը | | Իրական ծավալի ինդեքսները | | Մասնակցությունը հավելյալում | |
|---|---------------------------|-------------|--------|--------------------------|--------|-----------------------------|--------|
| | | 2005թ. | 2006թ. | 2005թ. | 2006թ. | 2005թ. | 2006թ. |
| 1 | Համախառն ներքին արդյունք | 100.0 | 100 | 114.0 | 113.4 | 14.0 | 13.4 |
| 2 | արդյունաբերություն | 18.8 | 15.1 | 107.4 | 98.9 | 1.4 | -0.2 |
| 3 | գյուղատնտեսություն | 18.7 | 17.7 | 111.2 | 100.4 | 2.5 | 0.1 |
| 4 | շինարարություն | 21.7 | 26.7 | 135.1 | 137.1 | 5.5 | 8.1 |
| 5 | տրանսպորտ և կապ | 5.6 | 5.9 | 113.2 | 116.0 | 0.8 | 0.9 |
| 6 | առևտուր և հանրային սնունդ | 10.5 | 10.2 | 109.6 | 111.7 | 1.1 | 1.2 |
| 7 | այլ ճյուղեր | 16.2 | 16.2 | 110.7 | 114.5 | 1.8 | 2.4 |
| 8 | զուտ հարկեր | 8.5 | 8.2 | 110.5 | 111.2 | 0.9 | 0.9 |

Ինչպես և նախորդ տարի, աճի աննախադեպ բարձր տեմպ է արձանագրվել շինարարությունում, ինչի հետևանքով շինարարության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում ավելացել է 5 տոկոսային կետով՝ կազմելով 26.7%, իսկ ՀՆԱ-ի հավելաճում շինարարության մասնաբաժինը

* Վերլուծությունը կատարված է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

կազմել է 8.1%, ինչը գրեթե երկու անգամ գերազանցում է հավելաճում մյուս բոլոր ճյուղերի մասնակցության գումարային ցուցանիշը:

Հանրապետությունում իրականացվել են 623.1 մլրդ. դրամի շինարարական աշխատանքներ, աճը՝ 137.1%, այդ թվում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 571.6 մլրդ. դրամ, կամ 91.7%: Շինարարական աշխատանքների ընդհանուր ծավալից 255.1 մլրդ. դրամը (40.9%) բաժին է ընկնում արտադրական նշանակության օբյեկտներին, այդ թվում շինմոնտաժային աշխատանքները կազմում են 209.4 մլրդ. դրամ, կամ 82%:

Հաշվետու ժամանակաշրջանում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը կազմել է 365.7 հազ. քառ. մ, կամ 2005թ. գործարկված մակերեսի 106.6%-ը:

2006թ. հանրապետությունում թողարկվել է (ընթացիկ գներով) 643.5 մլրդ. դրամի արդյունաբերական արտադրանք, իսկ իրացվել է 656.6 մլրդ. դրամի արտադրանք: Արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի 0.9%-ով նվազումը ուղեկցվում էր ՀՆԱ-ի արտադրությունում ճյուղի մասնակցությունը բնութագրող այլ ցուցանիշների նվազմամբ՝ ՀՆԱ-ի հավելաճում մասնաբաժնը կազմեց -0.2%, իսկ իրական ծավալի ինդեքսը՝ 98.9%:

Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը կազմել է 96.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների անկումը արձանագրվել է մշակող արդյունաբերությունում՝ 97.9% և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ճյուղում՝ 97.8%, ինչը 2004-2005թթ. տնտեսությունում ի հայտ եկած և շարունակվող բացասական միտումների ազդեցության հետևանք է: Աճ է արձանագրվել միայն հանքագործական արդյունաբերությունում՝ 106.2%:

Շարունակվել է թողարկվող արտադրանքի ծավալների անկումը մշակող արդյունաբերության մի շարք ճյուղերում՝ հագուստի արտադրություն՝ 96.4% (2005թ. - 72.3%), ոսկերչական արտադրատեսակների արտադրություն՝ 75.7% (97.4%), մանածագործական արտադրություն՝ 97.5% (74.8%): Որպես բացասական կարելի է նշել արտադրության անկումը հանրապետության համար այնպիսի կարևոր ճյուղում, ինչպիսին քիմիական արդյունաբերությունն է՝ 87.6% (157.1%):

Միաժամանակ, արդյունաբերական արտադրանքի արտադրության ցուցանիշի վրա որոշակի դրական ազդեցություն է ունեցել արտադրության ծավալների աճը հանքագործական արդյունաբերությունում, ինչպես նաև մշակող արդյունաբերության մի շարք ճյուղերում շարունակվող դրական միտումները. մետաղագործական արդյունաբերություն՝ 104.8% (2005թ. - 134.9%), պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն՝ 127.1% (133.1%), այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն՝ 109.6% (126.1%) և այլն:

Ինչպես և նախորդ տարիներին, արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում գերակշռել է մշակող արդյունաբերությունը, որի տեսակարար կշիռը՝ 65.0% պահպանվեց 2005թ. մակարդակի վրա՝ 65.1%: Հանքագործական արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 17.6% (աճը՝ 0.2 տոկոսային կետով), էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը՝ 17.4% (նվազումը՝ 0.1 տոկոսային կետով):

Մշակող արդյունաբերության կառուցվածքում 2005թ. համեմատ հատկանշական է սննդի արդյունաբերության տեսակարար կշռի աճը 43.2-ից մինչև 45.4%, ինչպես նաև մետաղագործական արդյունաբերության՝ 29.8-ից մինչև 26.2% և ոսկերչական արտադրատեսակների արտադրության 3.3% մինչև 1.6% տեսակարար կշիռնորի նվազումը: Այլ զգալի կառուցվածքային փոփոխություններ տեղի չեն ունեցել:

Տարածքային կտրվածքով արյունաբերական արտադրանքի թողարկման գերակշիռ մասը ավանդաբար բաժին է ընկել Երևան քաղաքին՝ 44.5%, ինչը, սակայն, 2005թ. համեմատ ցածր է 2.8 տոկոսային կետով: Իրենց մասնաբաժինը արդյունաբերական արտադրանքի ծավալում ավելացրել են Սյունիքի՝ 18.5-ից մինչև 18.8%, Լոռու՝ 5.5-ից մինչև 7.1% և Արարատի՝ 7.0-ից մինչև 8.4% մարզերը: Շարունակում է ցածր մնալ նախկինում խոշոր արդյունաբերական տարածաշրջան հանդիսացող Շիրակի (նեռարյալ Գյումրի քաղաքը) մարզի մասնաբաժինը արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում, որը կազմել է 2.1%: Ցածր են մնացել Տավուշի՝ 0.7, Վայոց Ձորի՝ 0.8 և Արագածոտնի՝ 1.1% մարզերի տեսակարար կշիռները:

Վերը նշված ցուցանիշները վկայում են, որ Երևանի և մարզերի (ինչպես նաև առանձին մարզերի) միջև առկա է տնտեսական զարգացման մակարդակների խիստ տարբերակվածություն, որը շարունակում է խորանալ՝ իր հետ բերելով բնակչության սոցիալական վիճակի ավելի խորը բևեռացում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը կազմել է 555.9 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 100.4%: Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը կազմել է 111.9%:

Բուսաբուծության բաժինը գյուղատնտեսության համախառն արտադրանքում կազմել է 356.2 մլրդ. դրամ, ինչը 4.4%-ով ցածր է նախորդ տարվա մակարդակից: Անասնաբուծության արտադրանքի բաժինը կազմել է 199.7 մլրդ. դրամ, աճը՝ 10.4%:

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 820.8 մլրդ. դրամ, աճի տեմպը՝ 110.5%, իսկ մատուցված ծառայությունների ծավալը՝ 478.9 մլրդ. դրամ, աճի տեմպը՝ 120.3%: Սպառողական գների ինդեքսը կազմել է 102.9%:

2005թ. բնակչությանը մատուցված ծառայությունների կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռները պահպանել են կապի՝ 26.3% (126.2 մլրդ. դրամ) և տրանսպորտի՝ 22.9% (109.8 մլրդ. դրամ) ծառայությունները:

Ինչպես և նախորդ տարիներին, մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալից գերակշիռ մասը բաժին է ընկել Երևան քաղաքին՝ 87.5%, ինչը նախորդ տարվա համեմատ բարձր է 2.7 տոկոսային կետով: Մարզերում ծառայությունների մատուցման տեսակարար կշիռները տատանվել են՝ նվազագույնը 0.4% (Վայոց Ձոր) և առավելագույնը՝ 2.2% (Շիրակ և Կոտայք) միջակայքում, ինչը վկայում է մարզերի բնակչության ցածր վճարունակության և մատուցվող ծառայությունների տեսակների սահմանափակության մասին:

2006թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմել է 1314.4 մլրդ. դրամ (3198.3 մլն. ԱՄՆ դոլար), 2005թ. նկատմամբ ապահովելով 115.2% աճ: Արտահանման ծավալը կազմել է 412.2 մլրդ. դրամ (1004.0 մլն. դոլար), աճը՝ 103.1%, իսկ ներմուծման ծավալը՝ 902.2 մլրդ. դրամ (2194.3 մլն. դոլար), աճը՝ 121.8%: Ցավոք, ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով, հաշվետու տարում չի հաջողվել պահպանել ներմուծման նկատմամբ արտահանման առաջանցիկ աճի միտումը, որը դրսևորվել էր սկսած 1999 թվականից:

2006թ. առևտրային հաշվեկշիռը մնացել է բացասական՝ կազմելով 490.0 մլրդ. դրամ (1190.4 մլն. դոլար)՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով 116.3 մլրդ. դրամով (372.8 մլն. դոլար), և որպես հետևանք, վատթարացավ առևտրային հաշվեկշիռ ՀՆԱ հարաբերակցությունը՝ կազմելով 18.4%, նախորդ տարվա 16.8 %-ի դիմաց:

2005թ. համեմատ վատթարացան նաև ներմուծման ծածկույթի աստիճանի (արտահանում ներմուծում հարաբերակցություն) և նորմալացված առևտրային հաշվեկշռի (առևտրային հաշվեկշիռ արտաքին ապրանքաշրջանառություն հարաբերակցություն) գործակիցները՝ կազմելով 0,457 և 0,37 համապատասխանաբար 0.54 և 0.3 դիմաց:

Հաշվետու ժամանակաշրջանում 2005թ. համեմատ արձանագրվել է արտահանման աճ ԱՊՀ երկրներ՝ 13.2%-ով, ինչի հետևանքով արտահանման ծավալում ԱՊՀ երկրների տեսակարար կշիռը 19.3%-ից (187.8 մլն. դոլար) ավելացել է մինև 21.2% (212.6 մլն. դոլար): ԵՄ երկրներին բաժին է ընկնում արտահանման 47% (2005թ.՝ 46.5%), ինչը կազմում է 472.1 մլն. դոլար, աճը՝ 4.2%:

Ներմուծման ծավալում, ըստ ապրանքների ծագման երկրների, ԱՊՀ երկրներին բաժին է ընկել ընդհանուր ներմուծման 31.8% (698.3 մլն. դոլար), նախորդ տարվա 29.0%-ի դիմաց, աճը՝ 33.8%, ԵՄ երկրներին բաժին է ընկել 28.3% (621.0 մլն. դոլար), նախորդ տարվա 28.1%-ի դիմաց, աճը՝ 22.6%:

Արտահանման ծավալում, չնայած ծավալների որոշակի նվազման, բարձր տեսակարար կշիռ են պահպանել հետևյալ ապրանքախմբերը. թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք

մետաղներ և դրանցից իրեր՝ 31.9% (ծավալի աճի տեմպը՝ 95.3%), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 28.0% (87.2%), պատրաստի սննդի արտադրանք՝ 9.5% (98.4%): Տեսակարար կշռի և արտահանման ծավալի զգալի աճ է արձանագրվել հանքահումքային արտադրանքի գծով՝ 13.6% (145.9%):

Ներմուծման կառուցվածքում իրենց բարձր տեսակարար կշիռն են պահպանել հետևյալ ապրանքախմբերը. հանքահումքային արտադրանք՝ 16.7% (ծավալի աճի տեմպը՝ 123.0%), թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր՝ 14.7% (89.9%), մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ՝ 13.9% (131.2%), պատրաստի սննդի արտադրանք՝ 7.5% (112.4%), վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ՝ 9.0% (130.0%), ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր՝ 7.5% (174.0%):

Հաշվետու ժամանակաշրջանում բնակչության դրամական եկամուտները կազմել են 1722.2 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 119.8%, իսկ դրամական ծախսերը՝ 1650.7 մլրդ դրամ, աճի տեմպը՝ 118.9%: Պահպանվել է 2004-2005թթ. ձեռք բերված դրամական ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցման դրական միտումը:

Բնակչության դրամական եկամուտներից օգտագործված գումարների մեծ մասը՝ 77.2%-ը, կամ 1329.5 մլրդ. դրամը բաժին է ընկել ապրանքների գնմանն ու մատուցված ծառայությունների դիմաց կատարված վճարումներին (աճի տեմպը՝ 117.2%): Նշենք նաև, որ 2005թ. համեմատ նշված ցուցանիշի տեսակարար կշիռը նվազել է 1.5 տոկոսային կետով:

Տնտեսությունում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը (գնահատական) կազմել է 64 հազար դրամ, աճը նախորդ տարվա համեմատությամբ՝ 123.5%: Բյուջետային կազմակերպություններում զբաղվածների աշխատավարձը կազմել է 45.1 հազար դրամ (աճի տեմպը՝ 125.8%), իսկ ոչ բյուջետային կազմակերպություններում՝ 77.9 հազար դրամ (աճի տեմպը՝ 121.2%): Ամենաբարձր աշխատավարձը (2006թ. հունվար-նոյեմբերի տվյալներով) արձանագրվել է «վարկավորում և ապահովագրություն» ճյուղում՝ 197.0 հազար դրամ, իսկ ամենացածրը՝ արվեստի, առողջապահության, ֆիզկուլտուրայի, սոցիալական ապահովության, մշակույթի, գիտության և գիտ. սպասարկման, ինչպես նաև կրթության ոլորտներում և տատանվում է 32.7 47.2 հազար դրամի միջակայքում:

2006թ. (գնահատական) տնտեսապես ակտիվ բնակչության միջին թվաքանակը կազմել է 1201.3 հազար մարդ: Պաշտոնական գործազրկության մակարդակը կազմել է 7.4%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.7 տոկոսային կետով: